ԻՐԱՎԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Երևան **12.04.2022թ.**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը (այսուհետ՝ Քրեակատարողական ծառայություն)՝ ի դեմս Քրեակատարողական ծառայության պետ Սերգեյ Ատոմյանի, մի կողմից, և «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ՀԿ)՝ ի դեմս ՀԿ-ի նախագահ Նարե Հովհաննիսյանի, մյուս կողմից, (այսուհետ երկուսը միասին՝ Կողմեր),

կարևորելով Քրեակատարողական ծառայության դերը և նշանակությունը, ինչպես նաև նրա գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկումը,

բարձր գնահատելով քրեակատարողական ծառայողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը և կարողությունների զարգացումը,

խրախուսելով համագործակցության ծրագրերի իրականացումը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում.

հաշվի առնելով «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության առաքելության՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում հետազոտությունների, վերլուծությունների և գործնական պաշտպանության մեծ փորձը և ներուժը,

կնքեցին սույն համագործակցության հուշագիրը հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1.1. Սահմանել Կողմերի միջև համագործակցության ուղղությունները, ինչպես նաև կանոնակարգել դրա պայմանները և եղանակները:

1.2. Զարգացնել ազատազրկված անձանց վերասոցիալականացման, կրթական և աշխատանքային միջոցառումները և ծրագրերը:

1.3. Աջակցել խոցելի խմբերի ազատազրկված անձանց նկատմամբ իրականացվող վերասոցիալականացման միջոցառումներին և ծրագրերին:

1.4. Ստեղծել հնարավոր լրացուցիչ միջոցներ քրեակատարողական ծառայողների մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված ոլորտային ուսուցողական ծրագրեր և վերապատրաստումներ իրականացնելու ուղղությամբ:

1.5. Նպաստել քրեակատարողական համակարգի նկատմամբ հանրային վստահության աճին՝ քրեակատարողական ծառայության գործունեության, ինչպես նաև ոլորտում տեղի ունեցող զարգացումների մասին հանրային իրազեկման միջոցով:

ՀՈԴՎԱԾ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

2.1. Կողմերը համատեղում են կարողությունները՝ ազատազրկված անձանց օրինապահ վարքագծի դրսևորման, իրավագիտակցության բարձրացման, հասարակություն վերաինտեգրման, նոր հանցագործությունների կանխման նպատակով վերասոցիալականացման, կրթական ու աշխատանքային միջոցառումներ և ծրագրեր իրականացնելու գործընթացում:

2.2. Կողմերը հնարավորություն են ունենում համատեղ իրականացնելու քրեակատարողական ոլորտի զարգացման, դրա մասին հանրային տեղեկատվության տարածման՝ հանրային քննարկումների կազմակերպման, սոցիալական տեսահոլովակների, համատեղ զեկույցների, մամլո հաղորդագրությունների, հայտարարությունների պատրաստման, հանրայնացման և այլ գործառույթները:

2.3. Կողմերը միջոցներ կձեռնարկեն ապահովելու խոցելի խմբերի ազատազրկված անձանց կարիքների բավարարման համար համապատասխան աշխատանքների իրականացմանը:

2.4. Կկարևորվեն քրեակատարողական հիմնարկների պայմանների բարելավման աջակցությունը, առաջացած խնդիրները կարգավորելուն ուղղված լուծումների առաջարկումը,

քրեակատարողական ծառայության գործունեության ջատագովումը միջազգային կառույցների և ծառայության կարիքների և զարգացման ծրագրերի ներկայացումը դոնոր կազմակերպությունների շրջանում:

2.5. Կողմերի էլեկտրոնային կայքէջերում միմյանց՝ որպես համագործակցող կառույցների վերաբերյալ տեղեկությունների տեղադրում և տարածում:

2.6. Կողմերը կարող են իրականացնել այլ համատեղ ծրագրեր:

ՀՈԴՎԱԾ 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1 Կողմերն ընդունում են, որ սույն Հուշագրի շրջանակներում չեն կարող առաջանալ ֆինանսական կամ այլ նյութական պարտավորություններ՝ բացառությամբ, երբ Կողմերը լրացուցիչ համաձայնագրերով հաստատում են նման պարտավորությունները համագործակցության որևէ ուղղությամբ իրականացվող համատեղ ծրագրի շրջանակում:

3.2. Սույն Հուշագրով նախատեսված գործունեությունը կիրականացվի Կողմերի կողմից՝ իրենց բյուջեի հնարավորությունների շրջանակում՝ առանց պետական բյուջեի համար լրացուցիչ ծախսեր առաջացնելու:

3.3. Համատեղ միջոցառումների կազմակերպման համար Կողմերը կարող են ներգրավել ֆինանսական միջոցներ ՀՀ օրենսդրությամբ չարգելված աղբյուրներից:

ՀՈԴՎԱԾ 4. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԿԱՄ ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

4.1. Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակում Կողմերը կարող են համատեղ ծրագրերի իրականացման նպատակով կնքել լրացուցիչ համաձայնագրեր, որոնք չեն կարող հակասել Հուշագրին:

4.2. Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ ոչ ուշ քան 60 (վաթսուն) օր առաջ այդ մասին մյուս կողմին գրավոր ծանուցելով:

4.3. Հուշագրի գործողության դադարեցման դեպքում նախկինում Կողմերի կնքած և ֆինանսավորած լրացուցիչ համաձայնագրերը շարունակում են գործել մինչև դրանց գործողության ավարտը, եթե Կողմերը փոխադարձ համաձայնությամբ այլ որոշում չեն կայացնում:

4.4. Հուշագրում փոփոխությունները կատարվում են փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Համապատասխան փոփոխությունները բովանդակող փաստաթղթերը կցվում են Հուշագրին և կազմում դրա բաղկացուցիչ մասը:

ՀՈԴՎԱԾ 5. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

5.1. Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանության հետ կապված տարաձայնությունները ենթակա են կարգավորման Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Հուշագիրը բացառիկ իրավունքներ չի վերապահում: Կողմերն ազատ են Հուշագրով նախատեսված համագործակցության առարկայի վերաբերյալ համաձայնագրեր և հուշագրեր կնքել այլ անձանց կամ մարմինների հետ:

6.2. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6.3. Սույն համագործակցության հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝	**«ԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝**
Ս. ԱՏՈՄՅԱՆ	**Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**